ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Արգենտինայի Հանրապետության կառավարության միջև գիտատեխնիկական համագործակցության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Արգենտինայի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր),

ցանկանալով էլ ավելի ընդլայնել և ամրապնդել երկու երկրների միջև բարեկամական կապերը,

շահագրգռված լինելով զարգացնել գիտատեխնիկական համագործակցությունը՝ ի շահ երկու ժողովուրդների,

համաձայնեցին ներքոհիշյալ մասին.

Հոդված 1

Կողմերը պայմանավորվում են աջակցել և խթանել գիտության ու տեխնիկայի բնագավառում համագործակցության զարգացումը:

Հոդված 2

Համագործակցության ձևերն ու պայմանները կճշտվեն Կողմերի լիազոր հաստատությունների և կազմակերպությունների միջև կնքվելիք հատուկ պայմանագրերում՝ համաձայն սույն Համաձայնագրի դրույթների:

Հոդված 3

Սույն Համաձայնագրով նախատեսված գիտատեխնիկական համագործակցությունը հիմնականում ներգրավում է հետևյալը՝

1) փորձագետների, գիտնականների և տեխնիկական պատվիրակությունների փոխանակում,

2) Կողմերի սահմանած պայմաններին համաձայն՝ մասնագիտացման և կատարելագործման նպատակով կրթաթոշակների տրամադրում,

3) երկկողմ պայմանավորվածությունների հիման վրա ընտրված գիտական և տեխնիկական բնույթի ծրագրերի համատեղ ուսումնասիրում, որոնք կարող են իրականացվել ազգային, պետական կամ մասնավոր հիմնարկությունների կամ միջազգային կազմակերպությունների միջոցով,

4) գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառների մասնագետների փոխանակում և պատրաստում,

5) սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի համաձայն Կողմերի միջև կնքված հատուկ պայմանագրերում սահմանված գիտատեխնիկական համագործակցության ցանկացած գործունեություն:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի հիման վրա տարբերակման և համակարգված գիտական և տեխնիկական համագործակցությունը երաշխավորելու նպատակով Կողմերը պայմանավորվում են՝

1) անմիջականորեն կամ Կողմերի լիազոր հաստատությունների և կազմակերպությունների միջոցով համատեղ մշակել երկու երկրների միջև գիտատեխնիկական համագործակցության ընդհանուր ծրագիր և սահմանել համատեղ նախագծերի իրականացմանը խթանող անհրաժեշտ միջոցառումներ,

2) անմիջականորեն կամ Կողմերի լիազոր հաստատությունների կամ կազմակերպությունների միջոցով մշակել տեխնիկական ծրագրեր և նախագծեր՝ հաշվի առնելով յուրաքանչյուր Կողմի ազգային նախապատվությունները:

Հոդված 5

Կողմերը, համաձայն յուրաքանչյուր երկրում գործող օրենսդրության, կարող են խրախուսել մասնավոր հաստատությունների և կազմակերպությունների մասնակցությունը տվյալ համաձայնագրում նշված հատուկ պայմանագրերով նախատեսված համագործակցությանը:

Վերոհիշյալ մասնավոր հաստատությունների և կազմակերպությունների գործունեությունը իրականացվելու է տվյալ երկրի կառավարության պատասխանատվության ներքո:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի իրագործման նպատակով Կողմերը համաձայնում են հիմնել յուրաքանչյուր Կողմի ներկայացուցիչներից կամ երաշխավորված հաստատությունների և կազմակերպությունների պատվիրակներից բաղկացած գիտատեխնիկական Համատեղ հանձնաժողով: Գիտատեխնիկական համագործակցության Համատեղ հանձնաժողովը կոչված է մշակելու սույն Համաձայնագրում նախատեսված համագործակցության ծրագրերը և Կողմերի

հաստատմանը ներկայացնելու երկու երկրների միջև գիտատեխնիկական համագործակցության բոլոր սկզբունքային հարցերը:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի իրականացման նպատակով մասնագետների, սարքավորման և նյութերի տեղափոխման ծախսերը հոգում է ուղարկող Կողմը, իսկ կեցության, բժշկական սպասարկման և ներքին տեղափոխությունների ծախսերը՝ ընդունող Կողմը, եթե տվյալ Համաձայնագրից բխող հատուկ պայմանագրերում այլ կարգ սահմանված չէ:

Սույն Համաձայնագրում նախատեսված ծրագրերի, նախագծերի կամ միջոցառումների իրականացմանը Կողմերի մասնակցության ձևերն ու տարբերակները սահմանվում են հատուկ պայմանագրերի համաձայն:

Հոդված 8

Ընդհանուր և ֆինանսական պայմանները, ինչպես նաև նշանակված մասնագետների կարգավիճակը կորոշվեն համապատասխան արձանագրությամբ, որը Կողմերը կստորագրեն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում:

Հոդված 9

Նպատակ ունենալով դյուրացնել սույն Համաձայնագրում նախատեսված պայմանավորվածությունների իրականացումը՝ Կողմերը կարող են ածանցյալ արձանագրություններ, պայմանագրեր ստորագրել կամ հայտագրեր փոխանակել:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան սահմանադրական արարողությունների վերաբերյալ Պայմանավորվող կողմերի՝ միմյանց գրավոր ծանուցման օրից սկսած՝ մեկ ամիս հետո:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մնում հինգ (5) տարվա ընթացքում և ինքնաբերաբար կերկարաձգվի մեկ տարի ժամկետով, եթե

Կողմերից ոչ մեկը Համաձայնագրի գործողության ժամկետը լրանալուց առնվազն վեց (6) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չտեղեկացնի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր ցանկության մասին:

Սույն Համաձայնագրի չեղարկումը չի ազդի դրա գործողության ընթացքում կնքված օժանդակ պայմանագրերի վրա, եթե Կողմերը այլ կարգ չեն նախատեսել:

Կատարված է Բուենոս Այրեսում 1994 թվականի մայիսի 3-ին, 2 օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և իսպաներեն, ընդ որում երկուսն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1998 թվականի մայիսի 7-ից: